ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

____._____.2026թ. **N ____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 67-69-րդ հոդվածներով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 27-րդ հոդվածով և 67-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել Երևանի ենթակայության «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ 0078, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Քըրք Քըրքորյան փ. 16, պետական գրանցման համարը՝ 222.120.00113):

2. Երևանի քաղաքապետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողով.

2) ապահովել լուծարման միջանկյալ հաշվեկշռի և լուծարման հաշվեկշռի հաստատումը:

3. Լուծարման գործընթացի ընթացքում՝ «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության պարտատերերի պահանջը բավարարելուց հետո, մնացած գույքը և գույքային իրավունքները հանձնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆՏՐԱՆՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի քաղաքապետարանի ենթակայության «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միակ բաժնետերը հանդիսանում է Երևան համայնքը:

Որպես գործունեության հիմնական տեսակներ՝ Ընկերությունը մատուցել է Երևան քաղաքում հասարակական տրանսպորտային երթուղիների սպասարկման և դիսպետչերական ծառայություններ, իրականացրել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմին սպասարկող ծառայողական ավտոմեքենաների ընթացիկ սպասարկում, ինչպես նաև ապահովել է Ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղիի բնականոն գործունեությունն ու աշխատանքները:

Ներկայումս, Երևան քաղաքում հասարակական տրանսպորտի ոլորտում իրականացված մի շարք բարեփոխումների արդյունքում՝ ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող միակ օպերատոր «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի և տրոլեյբուսային ուղևորափոխադրումներ իրականացնող «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի կողմից շահագործվող բոլոր տրանսպորտային միջոցները համալրվել են GPS տեղորոշման համակարգով, ինչի հետևանքով Ընկերությունն այլևս չի մատուցում դիսպետչերական ծառայություններ:

Միաժամանակ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմին սպասարկող ծառայողական հին ավտոմեքենաները փոխարինվել են նոր էլեկտրական ավտոմեքենաներով և վերջիններիս սպասարկումը, ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին համապատասխան, իրականացվում է մասնավոր հատվածի կազմակերպությունների կողմից:

Ինչ վերաբերում է Ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղիի սպասարկմանը՝ որպես Երևան համայնքին պատկանող գույքային միավոր, նպատակահարմար է վերջինիս հետագա սպասարկումն ու շահագործումն իրականացնել այլ կազմակերպության միջոցով:

Վերը նշված փոփոխությունների արդյունքում՝ փաստացի, Ընկերության հետագա գործունեությունը դառնում է ոչ նպատակահարմար, ուստի անհրաժեշտություն է առաջացել այն լուծարելու:

Ելնելով վերոգրյալից՝ որպես Ընկերության 100% բաժնետեր, սույն նախագծով Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում Ընկերության լուծարման վերաբերյալ համապատասխան որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ